

«Osservatore Romano»-ի կարծեքով՝ ՀԵՆց Աղատ մոքի սկըզ-
բունքի մէջ Աստուծոյ գէմ ապստամբուելու ինչ որ սատանա-
յական բան կայ: Յայտաբար ելու այդ սկզբունքը հռոմում,
վերառութեանք են հասցնում եկեղեցական հեղինակութեան և
պատի իշխանութեան: Խաւալիայի զանազան կողմերից կաթո-
լիկները սկսեցին բաղոքել հռովմի համաժողովի գէմ և վերստին
յայտաբարեցին իրենց հաւատարմութիւնը հռովմի եկեղեցուն:

— ~~Առջևոտիկ~~ —

ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ ԽՆԴԻԲ

Աղքերի կենսունակութեան սաղմը թագնուած է ըն-
տանիքի մէջ. ընտանիքն է այն առաջին գպրոցը, ուր
սնւում – գաստիարակուում են հասարակութեան ապագայ
պիտանի անդամները, նոյն ընտանիքն է, որտեղ ծնունդ
են առնում ֆիզիքապէս առողջ և հօգեպէս զուարթ ան-
հատներ, դարձեալ ընտանիքն է տալիս հասարակութեան
ֆիզիքապէս, հօգեպէս և մտաւորապէս այլանդակ ան-
հատներ: Այս ճշմարտութիւնը բաղմիցս քարոզուել է խօս-
քով, մամուլի և բազմաթիւ գրքերի միջոցով, սակայն
կեանքը հարկաւոր չափով չի բարելաւուել, կատարեալ
դասնալուց շատ հեռու է և այդ նրա համար, որ մէկ
կողմից ժողովուրդը չի հասել զարգացման այն կատարե-
լութեան, որ ըմբռնի այդ ճշմարտութիւնը և անկարող է
իր մէջ արմատացած սովորութիւնները, նախապաշարում-
ները վերացնել, խոկ միւս կողմից այն հաստատութիւն-
ները, որոնք հնարաւորութիւն ունէին օգտակար, ժո-
ղովրդի բարօրութեան ծառայող գտղափարները գոր-
ծադրել տալ, կամ անփոյթ են գտնուել, կամ անհնարին
համարելով՝ յուսահատաբար ձեռք են թափ տուել ու բա-
ւականացել միայն պլատոնական կարեկցութիւն արտա-
յայտելով:

Մեր հասարակական կեանքի մէջ կան արմատացած

բաղմաթիւ պակասութիւններ, որոնց արմատախիլ անելը կարելի է միայն ամենաքուռն եռանդով և մի քանի սեռունդների ջանքով։ Այդ գիտենք, սակայն, կործում ենք, ոչ մի պակասութիւն, ոչ մի չարիք չի կարող մնայուն լինել, եթէ դրանց վերացնելու համար կայ հաստատ որոշումն և եռանդ՝ այդ որոշումն ի կատար ածելու։ Սոքա ծշմարտութիւններ են, որ մենք մի աւելորդ անդամ՝ հարկ ենք համարում կրկնել։

Եթէ ընտանիքը հասարակութեան ապագայ անդամների որբանն է և այնտեղ ծնունդ տանելով անհատը՝ ստանում է նրանից թէ իւր մարմնական և թէ հոգեկան զարդացումն, ապա ուրեմն ընտիր հասարակութիւն ունենալու համար ոլէտք է աշխատել այդ որբանն—ընտանիքը կազմակերպել ըստ կարելոյն յաջող, բարելաւ վիճակի մէջ։ Այդ, որն է ընտանեկան բարելաւ վիճակը։

Ամեն մի ընտանիք՝ բաղկացած լինելով որոշ հոգեկան յատկութիւնների տէր անհատներից, անշուշա ունի իր որոշ պահանջներն ու կարիքները և ուրեմն անհնարին է միանդամից որոշել նրա վիճակի բարելաւութեան չափը, մի գծի վրա դնել բոլոր ընտանիքներին և բարելաւութեան մի բեցեպտ տալ բոլորին, բայց կան պահանջներ, որոնք ամեն մի ընտանիքի երջանկութեան հիմքն են կազմում՝ այն է առողջութիւն և համերաշխութիւն—սէր։ Անշուշա, պակաս կարեւոր տեղ չի բռնում և հացի խնդիրը, սակայն երբ ընտանիքի անդամները—ծնողներն ու զաւակները առողջ են և սիրով, այնտեղ ճսիս կամ աղքատ սեղանը չի կարող գոհունակութեան կամ դժբաղդութեան պատճառ գառնալ, Մենք անձամբ ճանաչում ենք ընտանիքներ, որոնք իրանց օրական պարէնը հաղիւ են հայթայթում, բայց չենք լսել նրանցից տրտունջ, դժգոհութիւն, յուս սահատական ձեռքեր կոտրատումն։ Մինչդեռ շատ շատ է այն ընտանիքների թիւը, որոնք նիւթական ամեն տեսակ բարօրութեամբ ճսացած են, ունեն փարթամ ճաշ, հարուստ արդուղարդ, հիանալի բնակարան, բայց այնպէս տանջւում են ներքին ցաւերով, հոգեկան վշտով, որ ոչ

մի աշխարհային հարստութեամբ չի փոխարինւում։ Այդպիսիներից մէկի մայրն էր, որ անցեալները մեզ, իբրև բարեկամի, դառնապէս գանգատում էր թէ որքան դըժքաղդ է ինքը, որովհետեւ հարստութեամբ չի կարողանում ստանալ այն առողջութիւնը, որ խախտուած է իր ամուսնու երիտասարդական յանցանքի շնորհիւ և նա, իբրև կրթված մայր, յի՞ռաւի բարոյապէս տանջուում էր ամենօր, ամեն ժամ, տեսնելով իր միակ որդու հիւանդուագէմքը . . .

Եւ քանի՛ քանի ընտանիքներ տանջուում ու հալումաշեն լինում, առանց մէկին խոստովանելու իրանց ներսը կրծող վիշտը, քանի՛ քանի ընտանիքներ ոչնչանում, ջընջուում են այն կորստաբեր հիւանդութիւններից, որ առաջեն գալիս բղյախոհութիւնից, երիտասարդական շուայտ կեանք անցկացնելուց... իսկ այդպիսի կեանքը դժբաղդաբար մուտ է գործել մեր մէջ և սկսել է ծաւալ ստանալ՝ մանաւանդ կենդրոնական քաղաքներում։ Այսօր բացառիկ անհատներ, մատով ցոյց տալու անձինք են նրանք, որոնք ողջախոհութեամբ անցկացնելով իրանց պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը, ամուսնանում են և բաղդատոր ընտանիք կազմում։ Շատ շատերը շնորհիւ ամեն տեղ ծաւալ ստացած հրապարակական և մասնաւոր անառականոցների, հալում, մաշում են իրանց ոսկի տարիները և երբ վարակուած, հիւծուած, հիւանդուած վիճակի են համնում և զեղխութիւնը ձանձրալի է դառնում նրանց, փորձում են ամուսնանալ՝ առանց հաշւի առնելու թէ իրանք որքան համապատասխան են ամուսնական պարտաւորութիւնները որբութեամբ կատարելուն և թէ ինչ ծանր պատասխանատւութիւն կայ իրանց վրա՝ իբրև ընտանիքի հայր։

Այսպիսի անպատասխանատու և անպարտաճանաչ ամուսնութիւն տեղի է ունենում ոչ միայն տգէտների շրջանում, այլ և իրանց «լուսաւորուած» համարողների մէջ և այդ, այն պատճառով, որ մեր ամուսնացող շատ երիտասարդներ անհոգ են վերաբերւում դէպի ընտանե-

կան պարտաւորութիւններն ու նրա սրբութիւնները, իսկ տգիտութիւնը աւելի ոյժ է տալիս դրան:

Քանի քանի դէպքերի նկարագրութիւններ կարելի է դժունել այն դժբաղդ ընտանիքների մասին, որոնք սերնդէ սերունդ անց են կացնում վարակիչ հիւանդութիւնը և այլասեռում ընտանեկան կազմը. որքան անդամ առողջապահական հարցերով զբաղուսղ հրապարակախօսներ գանգատուել են, որ ախտաւոր, վարակիչ հիւանդութիւններով անհատները ամուսնանալով պատճառ են դառնում ապագայ սերնդի թշուառ կերանքի և բողոքում են այդպիսի ամուսնութեան դէմ, սակայն մինչեւ օրս այս խոշոր խնդրի վրա հարկաւոր ուշագրութիւն չէ դարձրած և չի դիմուել հարկաւոր միջոցների:

Ոչ ոք չի մտածիլ անկողնում պառկած հիւանդին ամուսնացնել, այլ կոպասեն մինչեւ նա առողջանայ, կազդուրուի, «վրա գայ». բայց տեսնում ենք հարիւրաւոր օրինակներ, երբ ախտաւոր, ծանր հետեանքներով հիւանդերիտասարդներ ամուսնանում են և՛ վարակելով կանաց, և՛ տալով հասարակութեան հիւանդուտ ախտաւոր սերունդի թէւ մեր հոգեսոր Ատեաններում դեռ քիչ են ամուսնալուծական այդպիսի խնդիրներ, սակայն այդ քիչն էլ հերիք է մակաբերելու, որ վարակիչ հիւանդութեամբ ամուսնացողների թիւը բացառութիւն չէ և ապագայում կարող է ընդունել լայն ծաւալ, մանաւանդ որ գիտենք, թէ ընտանիքների որքան չնչին տոկոսն է հրապարակի վրա դնում իր ընտանեկան դադարնիքը:

Խելագարին, անդամալոյծին արգելուում է ամուսնանալ, օրէնքը զրկում է նրանց այդ իրաւնքից, նոյն օրէնքը պատժում է յանցագործներին, բայց չկայ օրէնքը, որով արգելուէր թոքախտաւորների, վեներական և այլ վարակիչ հիւանդների ամուսնութիւնը, մինչդեռ սորա պատճառած մնասներն աւելի մեծ են և սոսկալի, քան ոճրագործութիւնը, որովհետեւ կերանքի մէջ ոճրագործութիւնը մի անցողական երեսյթ է, մինչդեռ այդպիսիների ամուսնութիւնը սպառնում է ջնջել երկրիս վրայից ամբողջ սե-

բունդներ և մի ազգի գոյութեան վտանգ սպառնալ:

Մինչդեռ եթէ պարտաւորից լինի ամուսնութիւնից առաջ բժշկի կարծիքը հարցնել և հիւանդութեան դեպքում բժշկուել, ապա առնել իր վրա ամուսնական պարտաւորութիւնը, նախ՝ սերունդը առողջ կլինի և երկրորդ չի խախտուիլ ընտաներան խաղաղութիւնը:

Նատ ցանկալի էր, եթէ մարդիկ այն գիտակցութեան հասած լինէին, որ ինքնաբերաբար զգային հիւանդութիւնների պատուաստման չարիքը և նախ քանի ամուսնալը դիմէին բժշկի օգնութեան, բայց եթէ այդ գիտակցութիւնը չկայ ինչ ինչ պատճառով, այն ժամանակ պարտական են անել այդ բանը նրանք, որոնց բարոյական պարտականութիւնն է հսկել ընտանեկան բաղդաւորութեան վրա:

Յօդուածս գրելու առիթ տուեց ս. Էջմիածնի ս. Մինօդի մօտ օրերս հրատարակած մի որոշումն, որ վերաբերում է ախտաւորների ամուսնութեան, այդ պատճառով էլ մենք կանդ առանք ընտանեկան բաղդաւորութեան հիմք կազմող առաջին կէաի՝ առողջութեան՝ վրա:

Հոկտեմբերի սկզբներում ստացուեց Աստրախանի թեմակալ Արխատակէս Արքեպիսկոպոսի մի յայտարարութիւն, որով խնդրում է ս. Մինօդի տնօրինութիւնը «ենթարկել ամուսնացող երիտասարդներին բժշկական քննութեան և ապա թոյլ տալ ամուսնանալ»: Մի զարմանալի զուգագիպութեամբ Մինօդի մէջ այդ օրերում արձարձուում էր ի միջի այլ խնդիրների նաև այդ հարցը և այսօր ահա մեր առաջն է Մինօդի որոշումն, որ միանդամայն համակարծիք լինելով սրբազան Արխատակէս Արքեպիսկոպոսի հետ, պատիրում է իր ստորագրեալ հաստատութեանց՝ պահանջել ամուսնացող երիտասարդներից միւս ապացուցաթղթերի հետ նաև բժշկական վկայական նոցա առողջութեան մասին:

Որովհետեւ մեր շատ գիւղերում բժիշկներ չկան, իսկ գիւղացիք հնարաւորութիւնից զրկուտծ են տաճնետի վերստեր ճանապարհ կտրելու քաղաքներում բժշկական

քննութեան ենթարկուելու համար, ուստի ս. Սինօդը առ
այժմ՝ իր որոշումն պարտագիր է հրատարակում՝ միայն
քաղաքների և այն գիւղերի համար, որոնք առանց գըժ-
ուարութեան կարող են բժշկական վկայական ձեռք բերել։
Մենք ողջունելով ս. Սինօդի այդ ուշադրութեան
արժանի որոշումն, հաւատացած ենք, որ թէ մամուլը և
թէ հասարակութեան բանիմաց մասը մեզ հետ համա-
կարծիք կլինի, որ այդ փրկարար միջոցով մեծ չափով հի-
ւանդու և այլասեռուած սերունդ արտադրելու առաջը
կառնուի.

Հարկաւոր է միայն ամեն ջանք դնել մեր գիւղական
ազգաքնակութեանը համոզելու, որ ս. Սինօդի այս որո-
շումը մի քահաճոյք չէ, այլ նպատակ ունի նորա կենսա-
կան պահանջներից մէկին բաւարարութիւն տալ, թերեւ
այն ժամանակ նոքա էլ ինքնարերաբար, զոհողութիւններ
յանձն առնելով կդիմեն բժշկի խորհրդին նախքան ամուս-
նական ծանր պատաւորութիւն յանձն առնելը։

X.

ՄՈՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ

(Նարունակութիւն)

Առաջին յօդուածում կրթութեան գործին վերաբե-
րող բոնութեան իրաւունքի մասին էի խօսում և աշխա-
տում էի ապացուցանել, որ առաջին՝ բանութիւն անկա-
րելի բան է, երկրորդ՝ որևէ հետեանքի չէ հասցնում
կամ թէ տիսուր հետեանքների է հասցնում և երրորդ՝